Ալեքսանդր Ծատուրյան

Մեղա՛ քեզ, աստված…

(Ծատերից մեկի խոստովանանքը)

Կուշտ եմ և առողջ, կյանքից բավական,
Սեղանը առատ, ճաշը պատվական,
Բայց թե ի՞նչպես եմ այդ կյանքին հասած
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառա,
Հողեր, կալվածներ, կառք ու ձի առա,
Բայց ի՛նչ փողերով, ի՞նչպես վաստակած –
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Տըներ շինեցի շքեղ, փառավոր,
Ապրում եմ մեջը, ինչպես թագավոր:
Բայց քանի՛ մարդու ես տուն եմ քանդած
Այդ մի՛ հարցնեք… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Խանութ բաց արի, գործ սկսեցի.
Կարճ ժամանակում մեծ գանձ դիզեցի,
Բայց քանի՛ անգամ ես կոտր եմ ընկած
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Կյանքում ես գտա մի «ազնիվ ընկեր».
Գործիս մեջ դրեց տասնյակ հազարներ.

Բայց վե՞րջը… վերջը նա քաղցած մընաց.
Իսկ ես կշտացա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է, ուտել է ուզում».
Բայց քանի՛ մարդ եմ ես քաղցած թողած
Այդ մի՛ հարցնեք… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Երբ տեղն է գալիս, սուրբ եմ ձևանում,
Ժամում ծնկաչոք աղոթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած,
Աշխարհք եմ խաբում… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Թե մեկը պատվիս դիպչի աշկարա,
Ես կրակ կըթափեմ այդ մարդու վերա.
Բայց ծածուկ ինչքա՛ն ես թուք եմ կերած
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Է՛հ, բավական է ձեր գլուխը տանեմ,
Ախար, «զո՛րն ասեմ, զո՛րն խոստովանեմ…»
Ի՛նչ մեղքեր ասեք, որ ես չեմ արած…
Մեղա՛ քեզ, աստվա՛ծ, մեղա՛ քեզ, աստվա՛ծ…

1896